ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » հուլիսի 2018 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-332-13.06.2018-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հուլիսի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 966 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-332-13.06.2018-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

«Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որոշման կարգում կատարել փոփոխություն և լրացում՝ որպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որոշման պայման նախատեսելով նաև տեղական արտադրության խթանմանը նպաստող առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվության տրամադրումը:

Նախագծով ըստ էության առաջարկվում է գնումների համակարգի միջոցով տեղական արտադրությունը խթանել այնպիսի մեխանիզմով, որը ենթադրում է գնման պայմանագրի արտոնյալ պայմաններով շնորհում՝

• այն մասնակիցներին, որոնք ապրանքն արտադրում են Հայաստանի Հանրապետությունում.

• աշխատանք կամ ծառայություն մատուցող՝ Հայաստանի Հանրապետությունում գրանցված կազմակերպություններին:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է ներկայացված օրենքի նախագծով քննարկվող գործող օրենքի հոդվածը թողնել անփոփոխ՝ հաշվի առնելով ստորև ներկայացված հանգամանքները՝

• գնումները կիրականացվեն համեմատաբար թանկ գնով.

• պայմանագիրը կշնորհվի ըստ էության ոչ շուկայական մեխանիզմով՝ անհավասար մրցակցության պայմաններում.

• առկա է մեծ ռիսկ, որ պայմանագրի շնորհման փուլում ներկայացվող տեղեկատվությունը կարող է արժանահավատ չլինել՝ մասնակցին կտրվի նախապատվությունը, սակայն վերջինս պայմանագիրը կկատարի այլ կերպ՝ ոչ տեղական ռեսուրսների օգտագործմամբ.

• առկա է ռիսկ, որ մրցութային հանձնաժողովները համարժեքորեն չեն գնահատի մրցութային առաջարկները, և նախապատվությունը կտրվի ոչ օբյեկտիվ չափանիշներով, ինչի հետևանքով կաճեն կոռուպցիոն ռիսկերը.

• գնումների միջոցով տեղական արտադրության խթանման նպատակադրումը կարող է հանգեցնել անբավարար որակի գնումների կատարմանը, ինչը պետության, որպես գնորդի դեպքում, կհանգեցնի փողի դիմաց արժեքի նվազման:

Մյուս կողմից այս մեթոդի կիրառումը կարող է հակասել ԱՀԿ գնումների համաձայնագրի պահանջներին, որին Հայաստանի Հանրապետությունն անդամակցում է 2011 թվականից և «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նպատակներին և գնումների հիմնական սկզբունքներին, որոնք միջազգայնորեն հանրահայտ են:

Պետք է հաշվի առնել նաև, որ նշված ռիսկային գործոնների հնարավորությունը նվազեցնելու նպատակով տարբեր ժամանակահատվածներում ընդունված «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում (2004, 2010 և 2016 թվականներ) չեն ներառվել տեղական ռեսուրսների օգտագործման հանգամանքով պայմանավորված արտոնություններ նախատեսող նորմեր:

Այնուհանդերձ, գտնում ենք, որ տեղական արտադրության խթանումը պետք է իրականացվի ոչ թե պետական գնումների միջոցով, այլ պետության կողմից օգտագործվող այլ գործիքների միջոցով:

Միևնույն ժամանակ նախագիծը թերի է, քանի որ դրանով սահմանված չէ տեղական արտադրողներին նախապատվության տրամադրման շեմը, օրինակ՝ գործնականում հնարավոր են դեպքեր, երբ Հայաստանի Հանրապետությունում արտադրված ապրանք առաջարկող մասնակցի գնային առաջարկը կրկնակի, եռակի անգամ գերազանցի օտարերկրյա ծագում ունեցող ապրանք առաջարկող մասնակցի գնային առաջարկից: Այս դեպքում հիշյալ նախապատվության տրամադրումը կհանգեցնի տնտեսապես ոչ շահավետ գնումների կատարմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հուլիսի 2018 թվականի N 966 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարար Ատոմ Ջանջուղազյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-332-13.06.2018-ՏՀ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2018 թ. հուլիսի 16
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-332-13.06.2018-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ ՀՕ-21-Ն օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասում.

1. 2-րդ կետի «մեջ:» բառը փոխարինել «մեջ, կամ.» բառերով.

2. լրացնել նոր՝ 3-րդ կետ.

«Տեղական արտադրության խթանմանը նպաստող առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նպատակը. Սույն օրենսդրական նախաձեռնության հիմնական նպատակն է խթանել Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացումը ի հաշիվ տեղական արտադրանքի, աշխատանքների և ծառայությունների ձեռք բերման քանակի աճի:

Առկա կարգավորման պարագայում հիմնախնդիրները. «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի առկա իրավակարգավորումները հնարավորություն չեն տալիս տեղական տնտեսվարող սուբյեկտներին տալ նախապատվության իրավունք գնումների իրականացման գործընթացում: Ստացվում է, որ ներկայումս գնումների գործընթացում շահող կամ ընտրված համարվող ֆիզիկական կամ իրավաբանական անձը ազատ է ընտրելու ցանկացած վայրի արտադրանք, աշխատանք և ծառայություն: Նման պարագայում տեղական շուկան կարող է և հաճախ դուրս է մնում այս գործընթացից:

Ակնկալվող արդյունքը. Ուստի «Գնումների մասին» գործող ՀՀ օրենքում նմանօրինակ լրացում և փոփոխություն կատարելու արդյունքում մենք կխթանենք ՀՀ տնտեսության զագացումը տեղական արտադրողների, աշխատանքներ կատարողների և ծառայություններ մատուցողների գործունեության ծավալների հնարավոր աճի շնորհիվ:

Միջազգային փորձը ոլորտում. Հարկ է նշել, որ նման պրակտիկան ընդունված է քաղաքակիրթ գրեթե բոլոր պետություններում: Այսպես, Ամերիայի Միացյալ Նահանգների կողմից 1933թ. ընդունված «Գնումների մասին Ամերիկյան ակտը» սահմանում է տեղական արտադրողներին նախապատվություն տալու պարտավորություն դաշնային գնումների իրականացման գործընթացում[1]: Դրան համապատասխան ԱՄՆ շուրջ 45 նահանգների օրենսդրությամբ սահմանված են գնումների իրականացման գործընթացում մի շարք նախապատվություն տվող դրույթներ, ինչպես օրինակ՝ Վետերաններին պատկանող, կանանց կամ սեռական փոքրամասնություններին պատկանող ձեռնարկություններից գնումների իրականացմանը նախապատվություն տալը: Համանման գնման նախապատվության իրավունք է տրվում որոշակի խումբ արտադրողների, օրինակ՝ կույրերի կողմից արտադրված ապրանքներին՝ Միսիսիպի նահանգում[2]:
Նմանօրինակ նախապատվության և արտոնությունների սահմանման փորձ առկա է նաև Ռուսաստանի Դաշնությունում: Այսպես. «Պետական և տեղական ինքակառավարման կարիքների համար ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ձեռբերման ոլորտում պայմանագրային համակարգի մասին» Դաշնային օրենքի դրույթների համաձայն մանր բիզնեսի խթանման նպատակով և տեղական ինքակառավարման մարմինները պարտավոր են իրենց տարեկան գնումների ծավալի նվազագույնը 15 տոկոսը իրականացնել մանր ձեռնարկատերերից և սոցիալական ուղղվածություն ունեցող ոչ առևտրային կազ-մակերպություններից[3]: Ընդ որում՝ ամբողջ ծավալում չի ընդգրկվում ատոմային էներգիայի միակ մատակարարից կատարվող գնումները: Այս դրույթները տարածվում են նաև

---

[1] Տես՝ https://fas.org/sgp/crs/misc/R43140.pdf
[2] Տես՝ http://www.osa.ms.gov/downloads/Purchase_Law_Update.pdf, էջ 23, կետ (xxiv)
[3] Տես՝ Федеральный закон от 5 апреля 2013 г. N 44-ФЗ “О контрактной системе в сфере закупок товаров, работ, услуг для обеспечения государственных и муниципальных нужд”, статья 1, Система ГАРАНТ: http://base.garant.ru/70353464/#ixzz4yO31TQvL

պետական ենթապայմանագրերի միջոցով մանր բիզնեսի ներկայացուցիչների ընդգրկում գնումների իրականացման գործընթացում:
Իսկ ահա «Իրավաբանական անձանց առանձին տեսակների կողմից ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնումների մասին» Դաշնային Օրենքի համաձայն Պատվիրատուն պարտավոր է օրենքով սահմանված այլ տեղեկությունների հետ միասին իր

ամենամսյա հաշվետվություններում 4-րդ տողով ներկայացնել գնումների առնչությամբ մանր և միջին ձեռնարկատիրության հետ կնքված պայմանագրերի քանակի և ընդհանուր արժողության վերաբերյալ տեղեկություններ[4]:

---

[4] Տես՝ Федеральный закон от 18 июля 2011 г. N 223-ФЗ "О закупках товаров, работ, услуг отдельными видами юридических лиц", п.4 ч.19 ст.4 Закона № 223-ФЗ). Система ГАРАНТ: http://base.garant.ru/12188083/#block_4194#ixzz4yODOMW5K__